ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «13» 05 2025 թ. № 1299-Լ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՑՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՑԱՆԿԸ, ԱՅԴ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին և 13-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 3-ի N 374-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 4-րդ կետով՝

հրամայում եմ.

1.Սահմանել՝

1) Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության

տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրերի նշմամբ պարենային արտադրանքի ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա պարենային արտադրանքի համապատասխանության հայտարարագրի լրացման կանոնները և ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

2. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելիս սույն հրամանի N 1 հավելվածով սահմանված ցանկում ներառված և անասնաբուժական հսկողության (վերահսկողության) կամ կարանտին բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանքի նկատմամբ կիրառվում են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 կամ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 25-ի N 621 և 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշումներով սահմանված պահանջները:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և գործում է մինչև 2027 թվականի սեպտեմբերի 1-ը:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի մայիսի «13» -ի N 1299 - Լ հրամանի

ՑԱՆԿ

Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրերի նշմամբ պարենային արտադրանքի

Հ/Հ	Արտադրանքի անվանում	ԱՏԳ ԱԱ
	Հացահատիկ	
1.	կոշտ ցորեն	1001 19 000 0
2.	փափուկ ցորեն	1001 99 000 0 - ից
3.	տարեկան ցորեն	1002 90 000 0
4.	գարի	1003 90 000 0
5.	վարսակ	1004 90 000 0
6.	տրիտիկալե (ցորենաաշորային հիբրիդ)	1008 60 000 0 - ից
7.	կորեկ	1008 29 000 0
8.	հնդկաձավար	1008 10 000 9
9.	բրինձ	1006 10 210 0 1006 10 230 0 1006 10 250 0 1006 10 270 0 1006 10 920 0 1006 10 940 0 1006 10 960 0 1006 10 980 0
10.	եգիպտացորեն	1005 90 000 0
11.	սորգո	1007 90 000 0
12.	այլ հացազգիներ	1008 90 000 0- ից
13.	ոլոռ	0713 10 900 1 0713 10 900 9
14.	լոբի	0713 31 000 0 - ից 0713 32 000 0 - ից 0713 33 900 0 0713 34 000 9 0713 35 000 9 0713 39 000 9

15.	սիսեռ	0713 20 000 0 - ից
16.	ոսպ	0713 40 000 0 - ից
17.	կերային բակլայաբույսեր	0713 50 000 0 - ից
18.	Vigna mungo (L.) Hepper կամ Vigna radiata (L.) Wilczek տեսակների լոբիներ	0713 31 000 0 - ից
19.	այլ ոլոռազգի	0713 90 000 9 - ից
20.	այլ (շաղգամ, ճակնդեղ տերեւավոր (մանգոլդ), արմատապտուղներ կերային, խոտ, առվույտ, երեքնուկ, կորնգան, տերեւակաղամբ, լուպին, վիկ եւ նույնանման կերային մթերքներ, հատիկավոր (գրանուլացված) կամ ոչ հատիկավոր)	1214 90 900 0 - ից
21.	արևածաղիկ	1206 00 910 0 - ից 1206 00 990 0 - ից
22.	սոյա	1201 90 000 0 - ից
23.	բամբակենու սերմեր	1207 29 000 0 - ից
24.	կտավատ	1204 00 900 0 - ից
25.	այլ (հլածուկի կամ կոլզայի սերմեր՝ մանրատած կամ չմանրատած)	1205 10 900 0 - ից 1205 90 000 9 - ից
26.	մանանեխ	1207 50 900 0 - ից
27.	քունջութ	1207 40 900 0 - ից
28.	գետնանուշ	1202 41 000 0 - ից 1202 42 000 0 - ից
29.	վայրի քրքումի սերմեր	1207 60 000 0 - ից
Հյութեր մրգերից և բանջարեղենից		
30.	հյութեր մրգերից և (կամ) բանջարեղենից (բացի տոմատի հյութից), այդ թվում՝ ուղղակի մզման հյութ վերականգնված հյութ կոնցենտրացված հյութ դիֆուզային հյութ, այդ թվում՝ կոնցենտրացված դիֆուզային հյութ	2009 - ից
31.	մրգային և (կամ) բանջարեղենային նեկտարներ	2202 99 180 0 - ից
32.	մրգային և (կամ) բանջարեղենային հյութ պարունակող ըմպելիքներ	2202 99 180 0 - ից

33.	օշարակներ	2202 99 180 0 - ից
34.	կոնցետրացված օշարակներ	2009 - ից 2106 90 980 8 - ից
35.	մրգային և (կամ) բանջարեղենային խյուսեր (բացի տոմատի խյուսից), կոնցենտրացված մրգային և (կամ) բանջարեղենային խյուսեր (բացի տոմատի խյուսից)	2004 90 - ից 2005 10 009 0 - ից 2005 80 000 0 - ից 2005 99 100 0 - ից 2005 99 500 0 - ից 2005 99 800 0 - ից 2007 10 109 0 - ից 2007 10 919 0 - ից 2007 10 999 0 - ից 2007 91 - ից 2007 99 100 0 - ից 2007 99 310 0 - ից 2007 99 330 0 - ից 2007 99 350 0 - ից 2007 99 390 1 - ից 2007 99 500 1 - ից 2007 99 500 3 - 2007 99 500 5 - ից 2007 99 500 7 - ից 2007 99 930 0 - ից 2007 99 970 1 - ից 2007 99 970 2 - ից
36.	տոմատի հյութեր, տոմատի խյուսեր, կոնցենտրացված տոմատի խյուսեր (մածուկներ)	2002 90 2009 50 - ից
37.	կոնցենտրացված բնական բուրաստեղծ մրգային կամ բանջարեղենային նյութեր	2106 90 200 0 - ից 2106 90 980 8 - ից 3302 10 100 0 - ից 3302 10 210 0 - ից 3302 10 290 0 - ից 3302 10 400 0 - ից
38.	ցիտրուսային մրգերի պտղամսեր, մրգային և (կամ) բանջարեղենային պտղամսեր	2002 - ից 2004 - ից 2005 - ից 2008 20 510 0 - 2008 20 900 0 - ից 2008 30 510 0 - 2008 30 900

		- ից 2008 40 510 0 - 2008 40 900 0 - ից 2008 50 610 0 - 2008 50 980 0 - ից 2008 60 500 1 - 2008 60 900 0 - ից 2008 70 610 0 - 2008 70 980 9 - ից 2008 80 500 0 - 2008 80 900 0 - ից 2008 93 910 0 - 2008 93 990 0 - ից 2008 97 510 0 - 2008 97 980 0 - ից 2008 99 410 0 - 2008 99 980 0 - ից 2106 90 980 8 - ից
39.	խառը մրգաբանջարեղենային խյուսեր	2104 20 009 0 - ից
Փաթեթավորված խմելու ջուր, ներառյալ բնական և հանքային		
40.	բնական հանքային ջրեր՝ սեղանի	2201 10 - ից
41.	տեսակախառնած խմելու ջրեր	2201 90 000 0 - ից
42.	մշակված խմելու ջրեր	2201 90 000 0 - ից
43.	բնական խմելու ջրեր	2201 90 000 0 - ից
44.	արհեստականորեն հանքայնացված խմելու ջրեր	2201 10 900 0-ից
Սննդային ճարպայուղային արտադրանք		
բուսական յուղեր ու դրանց թորամասերը՝		
սոյայի յուղ և դրա զտամասերը՝		
45.	չզտված	1507 10 900 1 1507 10 900 9
46.	զտված	1507 90 900 1 1507 90 900 9
գետնընկույզի յուղ և դրա զտամասերը՝		
47.	չզտված	1508 10 900 0
48.	զտված	1508 90 900 0
ձիթապտղի յուղ և դրա զտամասերը՝		
49.	չզտված	1509 20 000 0 1509 30 000 0

		1509 40 000 0 1509 10 000 0
50.	զտված	1509 90 000 0 1510 90 000 0
արմավենու յուղ և դրա զտամասերը՝		
51.	չզտված	1511 10 900 2 1511 10 900 8
զտված՝		
52.	արմավենու յուղի պինդ զտամասեր	1511 90 110 0 1511 90 190 2 1511 90 190 8
53.	արմավենու յուղ և դրա զտամասերը՝ բացի պինդ զտամասերից	1511 90 990 2 1511 90 990 8
արևածաղկի յուղ և դրա զտամասերը՝		
54.	չզտված	1512 11 910 1 1512 11 910 9
55.	զտված	1512 19 900 2 1512 19 900 9
սաֆլորի յուղ և դրա զտամասերը՝		
56.	չզտված	1512 11 990 1 1512 11 990 9
57.	զտված	1512 19 900 3 1512 19 900 9
բամբակի յուղ և դրա զտամասերը՝		
58.	չզտված	1512 21 900 0
59.	զտված	1512 29 900 0
կոկոսի (միջուկի) յուղ և դրա զտամասերը՝		
60.	չզտված	1513 11 910 0 1513 11 990 2 1513 11 990 8
զտված՝		
61.	կոկոսի յուղի պինդ զտամասեր	1513 19 110 0 1513 19 190 2 1513 19 190 8
62.	Կոկոսի յուղ և դրա զտամասերը՝ բացի պինդ զտամասերից	1513 19 910 0 1513 19 990 2 1513 19 990 8
արմավենու միջուկի յուղ և դրա զտամասերը՝		
63.	չզտված	1513 21 300 0 1513 21 900 2

		1513 21 900 8
զտված՝		
64.	արմավամիջուկի յուղի պինդ զտամասեր	1513 29 110 0 1513 29 190 2 1513 29 190 8
65.	արմավամիջուկի յուղ և դրա զտամասերը՝ բացի պինդ զտամասերից	1513 29 500 0 1513 29 900 2 1513 29 900 8
բաբասուի յուղ և դրա զտամասերը՝		
66.	չզտված	1513 21 300 0 1513 21 900 2 1513 21 900 8
զտված՝		
67.	բաբասուի յուղի պինդ զտամասեր	1513 29 110 0 1513 29 1902 1513 29 190 8
68.	բաբասուի յուղ և դրա զտամասերը՝ բացի պինդ զտամասերից	1513 29 500 0 1513 29 900 2 1513 29 900 8
կանճրակի յուղ և դրա զտամասերը՝		
69.	չզտված	1514 11 900 1 1514 11 900 9 1514 91 900 1 1514 91 900 9
70.	զտված	1514 19 900 1 1514 19 900 9 1514 99 900 1 1514 99 900 9
մանանեխի յուղ և դրա զտամասերը՝		
71.	չզտված	1514 91 900 1 1514 91 900 9
72.	զտված	1514 99 900 1 1514 99 900 9
կտավատի յուղ և դրա զտամասերը՝		
73.	չզտված	1515 11 000 0
74.	զտված	1515 19 900 0
եգիպտացորենի յուղ և դրա զտամասերը՝		
75.	չզտված	1515 21 900 0
76.	զտված	1515 29 900 0

77.	գերչակի յուղ և դրա զտամասերը՝ չզտված և զտված	1515 30 900 0
քունջութի յուղ և դրա զտամասերը՝		
78.	չզտված	1515 50 190 0
79.	զտված	1515 50 990 0
80.	ժոժոբայի յուղ և դրա զտամասերը՝ չզտված և զտված	1515 90 110 0
81.	տունգի յուղ և դրա զտամասերը՝ չզտված և զտված	1515 90 110 0
այլ բուսական յուղեր և դրանց զտամասերը՝		
82.	չզտված	1515 90 610 0 1515 90 690 0
83.	զտված	1515 90 810 0 1515 90 890 0
84.	բուսական յուղ՝ խառնուրդ	1517 90 910 0 1517 90 990 0
յուղեր (ճարպեր)՝ վերաեթերացված, զտված, հոտազերծված՝		
85.	առաջնային փաթեթավորմամբ, 1 կգ-ից ոչ ավելի զուտ զանգվածով	1516 20 810 0
1 կգ-ից ավելի զուտ զանգվածով տարայում՝		
86.	վերաեթերացված, զտված, հոտազերծված յուղ՝ խաղողի կորիզներից	1516 20 960 2
87.	վերաեթերացված, զտված, հոտազերծված յուղ՝գետնընկույզի, բամբակի, սոյայի, արևաածաղկի, այլ յուղեր՝ բացառությամբ արմավամիջուկի, կոկոսի, կանճրակի յուղի	1516 20 960 8
88.	վերաեթերացված, զտված, հոտազերծված յուղ արմավամիջուկի, կոկոսի, կանճրակի	1516 20 980 8
89.	վերաեթերացված, զտված, հոտազերծված բուսական յուղեր	1517 90 100 0 1517 90 990 0
յուղեր (ճարպեր)՝ ջրածնավորված, զտված, հոտազերծված՝		
90.	առաջնային փաթեթավորմամբ, 1 կգ-ից ոչ ավելի զուտ զանգվածով	1516 20 810 0
1 կգ-ից ավելի զուտ զանգվածով տարայում՝		
91.	բամբակի յուղ՝ ջրածնավորված, զտված, հոտազերծված	1516 20 960 1
92.	ջրածնավորված, զտված, հոտազերծված յուղ՝ խաղողի կորիզներից	1516 20 960 2

93.	ջրածնավորված, զտված, հոտազերծված յուղ՝գետնընկույզի, սոյայի կամ արևաածաղկի, այլ յուղեր՝ բացառությամբ արմավամիջուկի, կոկոսի, կանճրակի յուղերի	1516 20 960 8
94.	ջրածնավորված, զտված, հոտազերծված յուղ՝ արմավամիջուկի, կոկոսի, կանճրակի	1516 20 980 8
95.	ջրածնավորված, զտված, հոտազերծված բուսական յուղեր	1517 90 100 0 1517 90 990 0
96.	մարգարիններ	1517 10 100 0 1517 10 900 0 1517 90 100 0 1517 90 930 0 1517 90 990 0
97.	սփրեդներ բուսաճարպային և խառնուրդներ՝ հալած, բուսաճարպային	1517 90 100 0
98.	սփրեդներ բուսասերուցքային և խառնուրդներ՝ հալած, բուսաճարպային	2106 90 980 4
99.	հատուկ նշանակության ճարպեր, այդ թվում՝ խոհարարական, հրուշակեղենային, հացաթխման	1516 20 810 0 1516 20 960 8 1516 20 980 8 1517 90 100 0 1517 90 930 0 1517 90 990 0
100.	կաթնային ճարպի փոխարինիչներ	1516 20 810 0 1516 20 960 8 1516 20 980 8 1517 90 100 0 1517 90 990 0
101.	կակաոյի յուղի համարժեքներ	1517 90 990 0
102.	կակաոյի յուղի բարելավիչներ՝ SOS-տիպի	1517 90 990 0
103.	կակաոյի յուղի փոխարինիչներ՝ POP-տիպի	1516 20 980 1 1517 90 990 0
104.	կակաոյի յուղի փոխարինիչներ՝ չբարեխառնվող, ոչ լաուրինային տեսակի	1516 20 980 1 1517 90 990 0
105.	կակաոյի յուղի փոխարինիչներ՝ չբարեխառնվող, լաուրինային տեսակի	1516 20 980 1 1517 90 990 0
106.	կակաոյի յուղի փոխարինիչներ՝ չբարեխառնվող, խառը տեսակի	1517 90 990 0
107.	սոուսներ բուսական յուղերի հիմքով	2103 90 100 0

		2103 90 900 9
108.	մայոնեզներ	2103 90 900 1
109.	սոուսներ մայոնեզային	2103 90 900 9
110.	կրեմներ՝ բուսական յուղերի հիմքով	1517 90 100 0 1517 90 990 0 2106 90 980 4
111.	գլիցերին՝ թորած	2905 45 000 9
112.	հացահատիկներ, յուղատու սերմեր և պտուղներ, այլ սերմեր, պտուղներ և հատիկներ յուղատու մշակաբույսերից և սերմերից ստացված ալյուր, գայլուկի պալարներ՝ թարմ կամ չորցրած, մանրատած կամ չմանրատած, փոշենման կամ հատիկավոր, բույսեր և դրանց մասերը (ներառյալ սերմերն ու պտուղները), թարմ, պաղեցրած սառեցված կամ չորացրած, ամբողջական կամ մանրացրած, մանրատած կամ աղացած, եղջերածառի պտուղներ , ճակընդեղ, շաքարեղեգ, պտուղների կորիզներ և միջուկներ, բուսական ծագման այլ մթերքներ, ալյուր ցորենի կամ ցորենաաշորային, ալյուր այլ հացահատիկների սերմերից, խոշոր աղացվածքի ալյուր և հացահատիկների սերմերի գրանուլներ, հացահատիկների սերմեր՝այլ միջոցներով մշակված, հացահատիկների սերմերի սաղմեր՝ ամբողջական, տափակեցրած, փաթիլների տեսքով կամ աղացած ալյուր՝մանր և խոշոր աղացվածքի, փոշի, փաթիլներ, գրանուլներ կարտոֆիլից, ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի և փոշի 0713 ապրանքային դիրքի լոբազգի չորացրած բանջարեղենից, 0714 ապրանքային դիրքի սագարմավենու միջուկից, արմատապտուղներից կամ պալարապտուղներից կամ 08 խմբում դասակարգված մթերքներից, ալրաղացածավարային	1001 1002 1003 1004 1005 1006 1007 1008 1201 1202 1203 00 000 0 1204 00 1205 1206 00 1207 1208 1209 1210 1211-ից 1212 1213 00 000 0 1214 1101 00 1102 1103 1104 1105 1106 1107 1108 1109 00 000 0 1901

	արդյունաբերության արտադրանք, ածիկ, օսլա, ինուլին, հացահատիկային սոսնձանյութ, ածիկային լուծամզուկ,պատռաստի սննդամթերք՝պատրաստ ված մանր կամ խոշոր աղացվածքի ալյուրից, ձավից, օսլայից կամ ածիկային լուծամզուկից, մակարոնային արտադրանք, կուսկուս, տապիոկա և դրա փոխարինիչները՝ պատրաստված օսլայիղ՝պատրաստի սննդամթերք ստացված հացաբույսերի հատիկները կամ հացահատիկային մթերքները փքելու կամ բովելու միջոցով, հացաբույսեր (բացի եգիպտացորենի հատիկներից)՝ հատիկի կամ փաթիլների տեսքով կամ այլ եղանակով մշակված հատիկի տեսքով, հաց, ալյուրով պատրաստված հրուշակեղեն, թխվածքներ, թխվածքաբլիթներ և հացաբուլկեղենային ու ալյուրից պատրաստված հրուշակեղեն՝ կակաոյի պարունակությամբ կամ առանց կակաոյի, վաֆլու սկավառակներ, վաֆելային բոլորաթերթեր՝ ծրարելու համար, բրնձաթուղթ և նույնանման մթերքներ, հացաբույսերի կամ լոբազգիների հատիկների մաղումից, աղալուց կամ այլ կերպով վերամշակումից ստացված թեփ,մաղուցք, դարման և այլ մնացորդներ՝ չհատիկավորված (չգրանուլացված) կամ հատիկավորված	1902 1903 00 000 0 1904 1905 2302
113.	թեյ (այդ թվում բուսական), սուրճ, մատե թեյի սուրճի կամ մատեյի լուծամզուկներ, էսենցիաներ, խտանյութեր և պատրաստի արտադրանքներ դրանց հիմքով: Համեմունքներ: Սուրճի այլ փոխարինիչներ և դրանցից ստացված լուծամզուկներ, էսենցիաներ և խտանյութեր, բոված եղերդ և սուրճի այլ բոված փոխարինիչներ, լուծամզուկներ,	0901 0902 0903 00 000 0 0904 0905 0906 0907 0908 0909

	էսենցիաներ և խտածոներ դրանցից: Խմորիչներ հացաթխման պատրաստի փոշիներ, ապուրներ և արգանակներ պատրաստի և նախապատրաստվածքներ դրանց պատրաստման համար: Սննդամթերք այլ տեղում չներառված, սպիտակուցային խտածոներ (կոնցենտրատներ) և տեքստուրացված սպիտակուցային նյութեր, խառնուրդներ կամ պատրաստի արտադրանք սննդի մեջ օգտագործվող, բաղադրագրային սպիրտային կիսապատրաստվածքներ, օշարակներ, մաստակ առանց շաքարի, աղցաններ: Բուսական հյութեր ու լուծամզուկներ, վանիլային, էթիլվանիլին	0910 1212 2101 2102 2104 2103 2106 1302-ից 2912 41 000 0 2912 42 000 0
114.	շաքար, եղեգնաշաքար կամ ճակնդեղի շաքար և քիմիապես մաքուր բուսաշաքար: Շաքարի այլ տեսակներ՝ ներառյալ քիմիապես մաքուր կաթնաշաքարը, ածիկաշաքարը, խաղողաշաքարը և պտղաշաքարը, պինդ վիճակում, շաքարի օշարակներ առանց համաբուրավետիչ կամ ներկող հավելումների, արհեստական մեղր՝ բնական մեղրի հետ խառնած կամ չխառնած, կարամելային կոլեր: շաքարային հրուշակեղեն (ներառյալ սպիտակ շոկոլադը), առանց կակաոյի պարունակության: Կակաոյի ունդեր՝ ամբողջական կամ մանրատած, հում կամ բոված: Կակաոյի կեղև, պատյան, նրբամաշկ և այլ մնացորդներ: Կակաո-մածուկ՝ յուղազերծված կամ չյուղազերծված: Կակաո-յուղ, կակաո-ճարպ: Կակաոյի փոշի: Շոկոլադ և կակաո պարունակող այլ պատրաստի սննդամթերք	1701 1702 1703 1704 1801 00 000 0 1802 00 000 0 1803 1804 00 000 0 1805 00 000 0 1806
115.	գարեջուր ածիկային, խմորման ենթարկված այլ խմիչքներ, խառնուրդներ խմորման ենթարկված խմիչքներից և	2203 00 2206 00 2207 2208

	խմորման ենթարկված խմիչքների և ոչ ալկոհոլային խմիչքների խառնուրդներ, 80% ծավալային բաժին կամ ավելի սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ, բնափոխված, ցանկացած խտության էթիլային սպիրտ և այլ սպիրտային թրմօղի, 80% ծավալային բաժնից ոչ պակաս սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ, սպիրտային թրմօղի, լիկյորներ և սպիրտային այլ խմիչքներ	
116.	բուրավետ նյութերի խառնուրդներ և խառնուրդներ (ներառյալ սպիրտային լուծույթներ) այդ նյութերից մեկի կամ ավելի հիմքով, որն օգտագործվում է որպես արտադրական հումք: Ըմպելիքների արտադրությունում օգտագործվող բուրավետ նյութերի հիմքով այլ արտադրանք Վանիլին Կիտրոնաթթու Սննդային ներկանյութեր	3302 2918 14 000 0 3203 00 3204

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի մայիսի «13» -ի N 1299 - Լ հրամանի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՑՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԸ

1. Համապատասխանության հայտարարագրման ժամանակ որպես հայտատու կարող է հանդես գալ Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որը կարող է լինել արտադրանք ներմուծողը կամ վաճառողը կամ արտադրողի լիազոր ներկայացուցիչը (այսուհետ՝ հայտատու):

2. Համապատասխանության հայտարարագիրը լրացվում է A4 (210x297 մմ) ձևաչափի սպիտակ թղթի վրա:

3. Հայտարարագիրը լրացվում է հայերենով՝ էլեկտրոնային տպող սարքերի օգտագործմամբ և սույն կանոնների 5-րդ կետի համաձայն: Անհրաժեշտության դեպքում, արտադրողի անվանումը, նրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն), գործունեության իրականացման վայրի հասցեն (բացի պետության անվանումից), ինչպես նաև արտադրանքի մասին տեղեկությունները (արտադրանքի տեսակը, մակնիշը, մոդելը, արտիկուլը և այլն) կարող են լրացվել լատինատառ:

4. Հայտարարագրի բոլոր դաշտերը պետք է լրացված լինեն, բացառությամբ սույն կանոնների 5-րդ կետի 3-րդ ենթակետը:

5. Հայտարարագրում նշվում է հետևյալը.

1) 1-ին դաշտում՝ «ARM ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ».

2) 2-րդ դաշտում՝ իրավաբանական անձի դեպքում՝ հայտատուի անվանումը, նրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն) և գործունեության իրականացման վայրի հասցեն (եթե հասցեները տարբեր են), կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը և գործունեության իրականացման վայրը (եթե հասցեները տարբեր են), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հայտատուի գրանցման կամ հաշվառման համարը (անհատական, նույնականացման)՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման համարը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

3) 3-րդ դաշտում՝ որպես հայտատու հանդես եկող և հայտարարագիր գրանցելու իրավասություն ունեցող կազմակերպության ղեկավարի կամ նրա լիազոր ներկայացուցչի պաշտոնը, ազգանունը, անունը և հայրանունը: Եթե հայտատուն հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, ապա տվյալ դաշտը չի լրացվում.

4) 4-րդ դաշտում՝ արտադրանքի վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝

ա. արտադրանքի անվանումը և նշանակությունը կամ արտադրանք արտադրողի կողմից սահմանված այլ պայմանական նշանակությունը (առկայության դեպքում).

բ. արտադրանքի մասին այնպիսի տեղեկությունները, որոնք ապահովում են արտադրանքի նույնականացումը (առկայության դեպքում).

գ. Եվրոպական միության անդամ պետությունների, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Ճապոնիայի կամ Միացյալ Թագավորության տարածքներում արտադրված լինելը հավաստող փաստաթուղթ՝ ծագման երկրի հավաստագիր (սերտիֆիկատ).

դ. իրավաբանական անձի և նրա արտադրանքն արտադրող մասնաճյուղերի դեպքում՝ արտադրողի անվանումը, նրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն) և գործունեության իրականացման վայրի հասցեն (եթե հասցեները տարբեր են) կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ազգանունը, անունը և հայրանունը, բնակության վայրը և գործունեության իրականացման վայրի հասցեն (եթե հասցեները տարբեր են).

ե. ստանդարտների ցանկը՝ նշելով դրանց նշագրերը և լրիվ անվանումները, ինչպես նաև բաժինները (կետերը, ենթակետերը. արտադրանքի արտադրության մեջ դրանց կիրառման դեպքում).

զ. արտադրանքի ծածկագիրը (ծածկագրերը)՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին և սույն հրամանի N 1 հավելվածով սահմանված ցանկին համապատասխան.

է. խմբաքանակի չափը և ապրանքաուղեկցող փաստաթղթերի վավերապայմանները՝ նույնականացնելով արտադրանքի խմբաքանակը (այդ թվում նաև խմբաքանակի չափը).

ը. «ՏՎՅԱԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՉԷ» գրառումը:

5) 5-րդ դաշտում՝ տեխնիկական կանոնակարգերի անվանումները.

6) 6-րդ դաշտում՝ տեղեկություններ փորձարկման արձանագրությունների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Լաբորատորիաների հավատարմագրման միջազգային համագործակցության («International Laboratory Accreditation Cooperation» - «ILAC») բազմակողմ ճանաչման պայմանագրի կողմ հանդիսացող հավատարմագրման մարմնի կողմից հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների կողմից, որոնք համարժեք են Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերով կամ վերջիններիս կիրարկումն ապահովող ստանդարտներով սահմանված նորմերի կամ ցուցանիշների թույլատրելի առավելագույն արժեքներին (նշվում է փորձարկման լաբորատորիայի համարը, ամսաթիվը, անվանումը, հավատարմագրման վկայագրի գրանցման համարը), ինչպես նաև հայտատուի կողմից ներկայացված այլ փաստաթղթերի վերաբերյալ, որոնք հանդիսանում են որպես ապացույց՝ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանության համար.

7) 7-րդ դաշտում՝ ստանդարտների և այլ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն, պահման պայմաններն ու պիտանիության ժամկետը, արտադրանքի ռեսուրսները (առկայության դեպքում).

8) 8-րդ դաշտում՝ հայտարարագրի գործողության դադարեցման ամսաթիվը (օրը՝ արաբական երկու թվանշանով, ամիսը՝ արաբական երկու թվանշանով, տարեթիվը՝ արաբական չորս թվանշանով).

9) 9-րդ դաշտում՝ որպես հայտատու հանդես եկող անհատ ձեռնարկատիրոջ, կազմակերպության ղեկավարի կամ կազմակերպության լիազոր անձի ստորագրությունը, ազգանունը, անունը և հայրանունը՝ հայտատուի կնիքով (եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ): Չի թույլատրվում ստորագրության փոխարեն ընդօրինակության (ֆաքսիմիլեի) օգտագործումը.

10) 10-րդ դաշտում՝ հայտարարագրի գրանցման համարը՝ նշելով ARM, որի կառուցվածքը հաստատում է «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից.

11) 11-րդ դաշտում՝ համապատասխան ռեեստրում գրանցված համապատասխանության հայտարարագրի գրանցման ամսաթիվը (օրը՝ արաբական երկու թվանշանով, ամիսը՝ արաբական երկու թվանշանով, տարեթիվը՝ արաբական չորս թվանշանով):

6. Հայտարարագրի 4-րդ, 6-րդ և 7-րդ դաշտերում նշված տեղեկատվության ծավալուն լինելու դեպքում այն կարող է ներկայացվել հայտարարագրի հավելվածով (բացառությամբ «Արտահանելի չէ» գրառման), որը հանդիսանում է հայտարարագրի անբաժանելի մասը և առանց հայտարարագրի իրավաբանական ուժ չունի: Հավելվածի յուրաքանչյուր էջ համարակալվում է, որի վրա զետեղվում է համապատասխանության հայտարարագրի գրանցման համարը, հայտարարագիր ընդունած անձի ազգանունը, անունը և հայրանունը, ինչպես նաև հայտատուի կնիքը (եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ): Հայտարարագրի համապատասխան դաշտերում հղում է կատարվում հավելվածին՝ նշելով էջերի քանակը:

7. Արգելվում է հայտարարագրի մեջ ներառել սույն կանոններով չնախատեսված տեղեկություններ, կատարել բառերի կրճատումներ (բացառությամբ համընդհանուր նշանակության կամ կրճատումների) կամ հայտարարագրի տեքստի ցանկացած ուղղում:

8. Համապատասխանության հայտարարագրերի պատճենները պատրաստվում են հայտարարագիր ընդունող անձի կողմից A4 (210x297մմ) ձևաչափի սպիտակ թղթի վրա՝ հաստատված տվյալ անձի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հայտատու կազմակերպության լիազորված անձի ստորագրությամբ, ինչպես նաև կնիքով (եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ):

ՁԵՎ

ARM ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ (1)

ՀԱՅՏԱՏՈՒ (2)

Ի ԴԵՄՍ ---------- (3)

Հայտարարում եմ, որ ---------- (4)

---------- և

ՏՎՅԱԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՉԷ

Համապատասխանում է ----------

---------- պահանջներին (5)

Համապատասխանության հայտարարագիրն ընդունված է ----------

----------հիման վրա (6)

Լրացուցիչ տեղեկատվություն ----------

---------- (7)

Համապատասխանության հայտարարագիրն ուժի մեջ է գրանցման ամսաթվից մինչև ---------- ներառյալ (8)

---------- Կ.Տ. ---------- (9)
ստորագրություն Հայտատուի Ա.Ա.Հ

Համապատասխանության հայտարարագրի գրանցման համարը

ARM N ---------- (10)

Համապատասխանության հայտարարագրի գրանցման ամսաթիվը ---------- (11)